Գործադիր օրինակ

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՀՄ.1**

**Հայաստանի Հանրապետության**

**և Ամերիկայի Միացյալ Նահանգների**

**միջև՝**

**Առավել մասնակցային, արդյունավետ և հաշվետու կառավարման զարգացմանն ուղղված**

**Համագործակցության համաձայնագրի**

1-ը Օգոստոսի, 2014թ.

**ԱՄՆ ՄԶԳ Զարգացմանն ուղղված համագործակցության համաձայնագիր հմ. AAG-111-G-13-001**

Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության Կառավարության աշխատակազմի (այսուհետ՝ Դրամաշնորհառու) և Ամերիկայի Միացյալ Նահանգների՝ ի դեմս ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջև՝ Առավել մասնակցային, արդյունավետ և հաշվետու կառավարման զարգացմանն ուղղված՝ 2013 թվականի սեպտեմբերի 28-ով թվագրված Համագործակցության համաձայնագրի ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ հմ.1:

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ 2013 թվականի սեպտեմբերի 28-ին Դրամաշնորհառուն և ԱՄՆ ՄԶԳ-ն Համագործակցության համաձայնագիր են կնքել՝ աջակցելու համար Առավել մասնակցային, արդյունավետ և հաշվետու կառավարման զարգացմանը, ինչպես նկարագրված է Համաձայնագրի 1-ին Հավելվածում (Գործողություն), և

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ Դրամաշնորհառուն և ԱՄՆ ՄԶԳ-ն ցանկանում են փոփոխություն կատարել Համաձայնագրում՝

ա) ավելացնելու համար ԱՄՆ ՄԶԳ կողմից ընդհանուր հատկացված գումարի չափը 2 448 881 դոլարից մինչև 8 966 128 դոլարի՝ այսպիսով տրամադրելով 6 517 247 դոլար լրացուցիչ ֆինանսավորում՝ Համաձայնագրի Գործողության իրականացումը շարունակելու նպատակով:

Գործադիր օրինակ

ԱՅՍՊԻՍՈՎ, Համաձայնագրի Կողմերը սույնով համաձայնում են Համաձայնագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Հանել Համաձայնագրի Բաժին 3.1-ի (3.1.ա) առաջին պարբերությունը՝ «ԱՄՆ ՄԶԳ ներդրումը», և այն շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   ա) Դրամաշնորհը: Սույն Համաձայնագրով սահմանված Նպատակի իրագործմանն օժանդակելու նպատակով ԱՄՆ ՄԶԳ-ն, Օտարերկրյա օժանդակության մասին 1961 թվականի որոշման (փոփոխություններով) համաձայն, սույնով Դրամաշնորհառուին է հատկացնում, Համաձայնագրի պայմաններին համապատասխան, ութ միլիոն ինը հարյուր վաթսունվեց հազար հարյուր քսանութ Միացյալ Նահանգների (ԱՄՆ) դոլարը (8 966 128 ԱՄՆ դոլար) չգերազանցող գումար (Դրամաշնորհ):

2. Հանել 1-ին Հավելվածի Ա Առդիրը՝ «Ֆինանսական պլան», և այն շարադրել հետևյալ խմբագրությամբ.

| **Նպատակը** | **Ծրագրի ոլորտը** | **Նախորդ հատկացումը** | **Տվյալ փոփոխությունը** | **Ընդհանուր հատկացումը** |
|---|---|---|---|---|
| Արդար և ժողովրդավարական կառավարում | Պատշաճ կառավարում | 1 160 000 | 4 427 529 | 5 587 529 |
| | Քաղաքացիական հասարակություն | 1 188 881 | 1 989 718 | 3 178 599 |
| Ծրագրի մշակման և ծրագրի վարչական ծախսերը | Վարչարարություն և վերահսկում | 100 000 | 100 000 | 200 000 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **2 448 881** | **6 517 247** | **8 966 128** |

Գործադիր օրինակ

3. Բացառությամբ սույն փաստաթղթում նշվածի՝ Համաձայնագրի մյուս պայմանները մնում են անփոփոխ, ուժի մեջ են և վավերական:

Հայաստանի Հանրապետության համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներքին ընթացակարգերը կատարելու մասին ամերիկյան կողմին ծանուցելու ամսաթվից:

Գործադիր օրինակ

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ Հայաստանի Հանրապետությունը և Ամերիկայի Միացյալ Նահանգները, յուրաքանչյուրը գործելով պատշաճ կերպով լիազորված իր ներկայացուցչի միջոցով, ապահովել են իրենց անունից սույն Համաձայնագրի ստորագրումն ու հանձնումը ստորև նշված ամսաթվին և թվականին:

**Հայաստանի Հանրապետության կողմից՝**

Անունը Դավիթ Հարությունյան

Պաշտոնը՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար

Ամսաթիվ

4-8-14

**Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից՝**

Karen R. Hilliard

Անունը Քարեն Ռ.Հիլիարդ

Պաշտոնը՝ ԱՄՆ ՄԶԳ/Հայաստան առաքելության տնօրեն

Ամսաթիվ

1-8-14